ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 3139 -Ա 22 ապրիլի 2009թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ ՏԱՔՍԻ - ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի <<Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին>> հ.1206-Ն որոշմամբ, Երևան քաղաքում մարդատար տաքսի-ավտոմոբիլների կայանման տեղերը կանոնակարգելու նպատակով, հաշվի առնելով Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի 2009թ. ապրիլի 6-ի հ.50/1647 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2009 թվականի ապրիլի 14-ի հ.18-06/2-7992 և Հայաստանի Հանրապետության ոստիկանության <<Ճանապարհային ոստիկանություն>> ծառայության 2009 թվականի ապրիլի 20-ի հ.17/3-2215 եզրակացությունները, ինչպես նաև հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի տեղակալի 2009 թվականի ապրիլի 21-ի հ.02/14-7992 Հ զեկուցագիրը.

1. Հաստատել Երևան քաղաքում մարդատար տաքսի-ավտոմոբիլների կայանատեղերի ցանկը (հավելված):

2. Սահմանել, որ մարդատար տաքսի-ավտոմոբիլների կայանատեղերի զբաղեցրած հողամասերի սահմանները և մակերեսները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից թողարկվող հատակագիծ-սխեմաներով, որոնք պետական գրանցման ենթակա չեն:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի <<Լուսանշան>> ՊՈԱԿ-ի տնօրենին՝ մարդատար տաքսի-ավտոմոբիլների կայանատեղերը, հատակագիծ-սխեմաների հիման վրա, կահավորել 5.18 <<Թեթև մարդատար տաքսիների կայանման տեղ>> ճանապարհային նշաններով և 1.17 (տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևերի դեպքում՝ 1.1) գծանշումներով:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի տեղակալներ Ս. Ավանեսյանի, Կ. Դավթյանի և Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Ս. Դանիելյանի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ**

Հավելված

Երևանի քաղաքապետի 2009թ.

22.04 - ի h. 3139 - Ա որոշման

Ց Ա Ն Կ
Երևան քաղաքում մարդատար տաքսի - ավտոմոբիլների կայանատեղերի

Հ/Հ	Տարածքի անվանումը	Տրանսպորտային միջոցների կայանման ձևը
	Կենտրոն համայնք	
1	Ֆրանսիայի հրապարակ՝ Մարշալ Բաղրամյան պողոտայից աջ դեպի Մաշտոցի պողոտա երթևեկության ուղղությամբ առկա գրպանիկում	Միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ
2	Մաշտոցի պող՝. գլխավոր պողոտայի այգու հետ հատման երկու մայթերին հարակից ճանապարհահատվածում	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
3	Աբովյան փողոցի՝ Օղակաձև զբոսայգու հետ հատման մասում (Իսահակյանի արձանի հանդիպակաց մայթի գրպանիկում)	Միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ
4	Տ.Մեծի պող՝. <<Այրարատ>> առևտրի կենտրոնի հանդիպակաց մայթի գրպանիկներում	Միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ
5	Լենինգրադյան փողոց՝ Մարզահամարգային համալիրի մուտքի դիմաց, երթևեկելի մասից դուրս, առանձնացված տարածքում	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
	Արաբկիր համայնք	
6	Միեր Մկրտչյանի անվան հրապարակ /Կոմիտաս պող. և Կասյան փող. խաչմերուկին հարակից տարածք)	Միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ
7	Բարեկամության հրապարակ (հ.19ա շենքի դիմաց)	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
8	Կոմիտասի պողոտա՝ շուկայի հանդիպակաց մայթի գրպանիկում	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
	Աջափնյակ համայնք	
9	Շինարարների փող՝. հ.22 շենքի դիմաց, հասարակական տրանսպորտի կանգառից դուրս	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
10	Հալաբյան փող. հ.31 և հ.33 շենքերի դիմաց (նախկին <<Արագած>> կ/թ-ի հանդիպակաց մայթ) հասարակական տրանսպորտի կանգառից դուրս	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
11	Հալաբյան փող.՝ Լենինգրադյան փողոցի հատման մասում (ստորգետնյա անցման մոտ), հասարակական տրանսպորտի կանգառից դուրս	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
12	Հալաբյան փող.՝ հ.34 շենքի դիմաց, հասարակական տրանսպորտի կանգառից դուրս	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
13	Մարգարյան Ֆուչիկի փողոցների խաչմերուկին կից, երթևեկելի մասից դուրս (պոլիկլինիկայի հարևանությամբ, ազատ հարթակում)	Միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ
14	Սիլիկյան Նոր խճուղու սկզբնամասում (Պրոֆալի շենքից հետո դեպի Շիրազի փողոցի խաչմերուկն ընկած հատված)	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
15	Չաուշի հրապարակ, հ.192 շենքի դիմաց	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
16	Շիրազի փողոց՝ Բաշինջաղյան 2-րդ նրբ. հ.30 և հ.32 շենքերի հարակից հարթակներում, երթևեկելի մասից դուրս	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
17	Մելքումովի փողոց՝ հ.27 և հ.28 շենքերի դիմաց	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
18	Լենինգրադյան փողոց՝ Լենինգրադյան-Սեբաստիայի խաչմերուկից <<Սեբաստիա>> կրթահամալիր ընկած հատվածում	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
	Մալաթիա-Սեբաստիա համայնք	
19	Անդրանիկի և Սվաճյան փողոցների խաչմերուկից դուրս, Անդրանիկի արձանի դիմաց (փողոցի աջ և ձախ կողմերում)	Միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ

	Ավան համայնք	
20	Մարշալ Բաբաջանյան փողոցի վրա ՝ Դուշամբեի փողոցի և Բաբաջանյան նրբ. միջնամասում ընկաց հատվածում	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
21	Աճառյան փողոց՝ ավտոպահեստամասերի խանութի դիմաց	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
22	Ավան-Առինջ թաղամաս, Տաշքենդի փողոցի և Բաբաջանյան նրբանցքի հատման մասում	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
	Նոր Նորք համայնք	
23	Գայի պող.՝ շուկայի հանդիպակաց հատվածում, երթևեկելի մասի տեղային լայնացման տարածքում	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
24	Բ.Մուրադյան փողոց՝ Ռադիոտեխնիկայի խանութի դիմաց (անցումի մոտ), հասարակական տրանսպորտի կանգառից դուրս	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
	Էրեբունի համայնք	
25	Կայանամերձ հրապարակ (մուտքի անցման դիմաց)	Միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ
26	Էրեբունի հրապարակում՝ թանգարանի դիմաց	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
27	Էրեբունի բժշկական կենտրոնին հարակից հրապարակ (Խաղաղ Դոնի և Տիտոգրադյան փողոցների հատման մասում), երթևեկելի մասից և վերջնականգառից դուրս	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
	Քանաքեռ-Զեյթուն համայնք	
28	Թբիլիսյան խճուղու Զ. Քանաքեռցու փողոցի հատման մասում, խաչմերուկի և վերջնականգառի սահմաններից դուրս	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
29	Հասրաթյան փողոց, Միքայելյանի անվան ինստիտուտի դիմաց	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
	Շենգավիթ համայնք	
30	Գ. Նժդեհի հրապարակ՝ հ.16 և հ.17 շենքերի դիմաց, հասարակական տրանսպորտի կանգառից դուրս	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
31	Արշակունյաց պող. և Թամանցիների փողոցի հատման մասում (նախկին բանվորի արձանի հարթակի դիմաց)	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
32	Աշակունյաց պող. և Գ. Նժդեհի փողոցի հատման մասում հ.31/36 շենքի դիմաց	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
	Դավթաշեն համայնք	
33	Տիգրան Պետրոսյան և Փիրումյան փողոցների հատման մասում (այգու դիմացի)	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
34	Տիգրան Պետրոսյան փող.՝ Սասնա Ծռեր փողոցի հետ հատման մասում	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
35	Տ.Պետրոսյան փողոց՝ հ.17 շենքի դիմաց (երթևեկելի մասի տեղային լայնացման հատվածում)	Միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ
36	Դավթաշեն 4-րդ թաղամաս՝ հ.20 պոլիկլինիկայի մոտ	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
37	Դավթաշեն 1-ին թաղամասի Աղաբաբյան և նորակառույց փողոցների հատման անկյունում	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
38	Դավթաշեն 4-րդ թաղամասի հ.27 շենքի հանդիպակաց մայթում՝ Ա. Միկոյան փողոցի վրա	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
	Նորք-Մարաշ համայնք	
39	Արմենակյան փողոցի վրա (<<Նաիրի>> հյուրանոցի մոտ)	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով
40	Արմենակյան և Գ.Հովսեփյան փողոցների հատման մասում	Երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով

Երևանի քաղաքապետարանի
աշխատակազմի ղեկավար **Գ. Մելքումյան**